ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/24

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.03.2018թ. թիվ 03/26-3/4183-18 գրությամբ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.03.2018թ. թիվ 01/61-4605 գրության հիման վրա, 07.03.2018թ. թիվ 03/26-3/4183-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 01.03.2018թ. թիվ 01/61-4605 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման» ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով, հարցում էր ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի՝ 44-րդ կետով սահմանված ժամկետում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերության նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը գումարային արտահայտությամբ պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի՝ 47-րդ կետով առաջարկել է մասնակցին մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից նշված անհամապատասխանությունը չի շտկվել և գնահատող հանձնաժողովի օրենքի պահանջների համաձայն մերժել է վերջինիս հայտը:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. «ԳԵՎՇԻՆ » ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն 05.04.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն 11.02.2018թ. հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) մասնակցելու համար:

Ընկերության կողմից հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են ընկերության տնօրեն Գևորգ Գևորգյանի կողմից 11.02.2018թ.:

Ընկերությունը ներկայացրել է նաև թիվ 9 հավելվածը՝ տուժանքի մասին համաձայնագիրը՝ հայտի ապահովման փաստաթուղթը, որի վրա որպես ամիս ամսաթիվ նշվել է 12.02.2018թ., սակայն մասնակցի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրվել և www.armeps.am-ի միջոցով Երևանի քաղաքապետարանին ուղարկվել են 11.02.2018թ. ժամը 21:31-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի չառնելով վերոհիշյալ հանգամանքը, ընկերությանը ճանաչել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ կոմիտե)՝ հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության մասին:

Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ ընկերության կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը գումարային արտահայտությամբ պակաս է ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկից, մասնավորապես ընկերության կողմից գնային առաջարկով ներկայացված ամենամեծ չափաբաժնի հանրագումարը կազմում է 13 000 000 ՀՀ դրամ, իսկ համախառն եկամուտի հանրագումարը՝ 5 457 863 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջարկել է ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը, սակայն

սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանությունը չի շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացումից հետո պետք է մերժվեր ընկերության հայտը, քանի որ առկա էր անհամապատասխանություն ընկերության կողմից ներկայացված հայտի և հայտի ապահովման փաստաթղթի ամսաթվի միջև, իսկ քանի որ Կարգի 41-րդ կետի համաձայն հայտի ապահովման փաստաթուղթը շտկման ենթակա չէ, ուստի այս պարագայում հանձնաժողովի կողմից հայտը մերժելու դեպքում ընկերությունը չէր ճանաչվի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և չէր արձանագրվի ընթացակարգի հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով առկա անհամապատասխանությունը՝ ինչը հիմք է հանդիսացել

ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ ընկերությունը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընկերության հայտը բավարար գնահատելով գործել է ոչ իրավաչափ՝ չպահպանվելով կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները, և վերոհիշյալ խախտմամբ իրականացված ընթացակարգի արդյունքում «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր առկա չեն:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/24 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.03.2018թ. թիվ 03/26-3/4183-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 01.03.2018թ. թիվ 01/61-4605 գրությունը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2, 20.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 և 22.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2018թ. Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 16.02.2018թ. տրված եզրակացությունը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների՝ մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ որոկավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 12.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով որոշել է 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 5.1 կետով Հանձնաժողովը որոշել է՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Հանձնաժողովը 20.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ստացված եզրակացության համաձայն «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը գումարային արտահայտությամբ, պակաս է ներկայացրած գնային առաջարկից:

Նույն արձանագրության 1.2 կետով Հանջնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 22.02.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունը չի շտկվել և հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշել է

«ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել անբավարար և վերջինիս հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով Ընթացակարգի հրավերի՝

- 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

- 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

- 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման

չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

Խորհուրդն արձանագրում է, որ

- «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկով ներկայացված 2-րդ չափաբաժնի հանրագումարը կազմել է՝ 11.650.000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, իսկ նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝

5.457.863 (հինգ միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.02.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը գումարային արտահայտությամբ, պակաս է ներկայացրած գնային առաջարկից:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը, սակայն Ընկերության կողմից նշված անհամապատասխանությունը չի շտկվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նկատի ունենալով, որ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/41 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.03.2018թ. թիվ 03/26-3/4183-18 գրությամբ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**